ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎԱԿԱՆ ՄԻՑՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երևան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ. փոստ՝ meo@ypc.am

Դիտորդ մարմնի կազմը՝

Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ռուբեն ԲԱԲԱՅԱՆ
Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ
Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ՝

Shamshyan.com լրատվական կայքի 2021թ.հուլիսի 27-ի՝ «Արտակարգ դեպք Երևանում. տղամարդը ասում էր, որ փրկել է Թրամփին, ու երկնքից իրեն տեղեկություններ են փոխանցվել Հայաստանը փրկելու համար. ոստիկաններն ու բժիշկները նրան ձեռնաշղթայված տեղափոխեցին «Ավան» հոգեկան առողջության կենտրոն» հրապարակման կապակցությամբ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ նախագահ Մուշեղ Հովսեփյանի դիմումի վերաբերյալ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ՀԱՎԵԼՎԱԾ

Սույն հավելվածը հարցադրում - առաջարկություն է՝ ուղղված ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը, ՀՀ ոստիկանությանը և այլ ուժային կառույցներին, ինչպես նաև առողջապահական հիմնարկներին:

Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմինը 2021թ.սեպտեմբերի 6-ին քննարկելով Shamshyan.com լրատվական կայքի հուլիսի 27-ի՝ «Արտակարգ դեպք Երևանում. տղամարդը ասում էր, որ փրկել է Թրամփին, ու երկնքից իրեն տեղեկություններ են փոխանցվել Հայաստանը փրկելու համար. ոստիկաններն ու բժիշկները նրան ձեռնաշղթայված տեղափոխեցին «Ավան» հոգեկան առողջության կենտրոն» հրապարակման կապակցությամբ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ նախագահ Մուշեղ Հովսեփյանի դիմումը և հրապարակման վերաբերյալ տալով իր փորձագիտական կարծիքը, հարկ է համարում, առիթն օգտագործելով, դիմել հատկապես ՀՀ ԱԻ նախարարությանը, ՀՀ ոստիկանությանը և այլ ուժային կառույցներին, ինչպես նաև առողջապահական հիմնարկներին՝ խնդրելով ծանոթանալ տվյալ եզրակացությանը:

Բացի այդ, մենք դիմում ենք այդ կառույցների ղեկավարությանը մի շարք հարցադրումներով.

1. Ակնհայտ է, որ վերջին տարիներին արտակարգ դեպքերի մասին տեղեկությունները փոխանցվում են առաջին հերթին Shamshyan.com կայքին, բացի այդ՝ տրամադրվում են նաև լուսանկարներ, տեսանյութեր: Ըստ էության, այդ կայքը դառնում է արտակարգ դեպքերի, առերևույթ հանցագործությունների և այլ իրադարձությունների մասին տեղեկությունների սկզբնաղբյուր, որին հղում են կատարում այլ լրատվամիջոցներ: Եթե սա մշակված քաղաքականություն է, ապա մտահոգության տեղիք է տալիս, որովհետև «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 6-րդ՝ «Լրագրողի հավատարմագրումը» հոդվածը պահանջում է. « (...) Լրատվության միջոցների համար նախատեսված տեղեկատվությունը հավատարմագրված բոլոր լրագրողներին պետք է տրամադրվի միաժամանակ, իսկ նախատեսվող միջոցառումների ճշգրիտ ժամանակի և վայրի մասին նրանք պետք է տեղեկացվեն դրանք սկսվելուց առաջ՝ ողջամիտ ժամկետում»:

2. Եթե արտակարգ դեպքերի մասին առաջինը Shamshyan.com կայքին տեղեկացնելը մշակված քաղաքականություն չէ, այլ իրականացվում է միջին կամ ստորին օղակների աշխատակիցների նախաձեռնությամբ, ապա, կարծում ենք, տվյալ գերատեսչություններն այս խնդիրը կարգավորելու անհրաժեշտություն ունեն:

3. Տպավորություն է ստեղծվում, որ հաճախ հիշյալ կառույցների աշխատակիցները տվյալ կայքին և Գագիկ Շամշյանին տրամադրում են նաև լուսանկարներ ու տեսանյութեր, որովհետև ակնհայտ է, որ մեկ մարդը մի քանի ժամվա ընթացքում չի կարող լինել և՛ Սյունիքում, և՛ Երևանում, և՛ Լոռիում: Սա ևս հակասում է բոլոր լրատվամիջոցներին տեղեկությունները միաժամանակ տրամադրելու սկզբունքին:

4. Վերջապես, այդ կայքը բազմիցս հրապարակում է նյութեր՝ կանխակալ վերաբերմունք ցուցաբերելով իրադարձությունների մասին՝ կատարվածը ներկայացնելով միայն իրեն իրազեկած կառույցի տեսանկյունից, պիտակավորում է մարդկանց, և անգամ նյութերի վերջում անմեղության կանխավարկածի մասին գրառումը չի ցրում մարդկանց հասցեին հնչեցված մեղադրանքների թողած տպավորությունը:

5. Հենց այս ուղերձի համար առիթ հանդիսացած հրապարակման մեջ առկա են բազմաթիվ էթիկական խնդիրներ: Օրինակ, մարդն արդեն նախապես ներկայացվում է իբրև հոգեկան առողջության խնդիրներ ունեցող, ապա, նկատի ունենալով անմեղության

կանխավարկածի մասին շաբլոն ծանուցումը, նաև՝ պոտենցիալ հանցագործ։ Բացարձակապես չի ներկայացվում, թե կոնկրետ ում համար էր նա վտանգ ներկայացնում, եթե ընդամենը իր տանն էր՝ իր շան հետ։ Գուցե հարևանները պարզապես ահազանգում են նրանից ազատվելու համա՞ր։ Արդյո՞ք ահազանգը կեղծ չի եղել, և արդյո՞ք ոստիկանությունը և մյուս կառույցների ներկայացուցիչներն իրավունք ունեին միայն մեկ ահազանգի (եթե միայն դա է եղել) հիմքով մարդուն տեղափոխել հոգեկան առողջության կենտրոն։

6. Մենք կարծում ենք, որ նման և այլ դեպքերի մասին մեկ, այն էլ լրագրողական էթիկայի տարրական նորմերին չտիրապետող լրատվամիջոցին տեղեկացնելը մշտապես հղի է մարդկանց անձնական և ընտանեկան կյանքին միջամտելու, ուժային կառույցների հնարավոր ոչ համաչափ գործողությունները կոծկելու վտանգով։

7. Մենք դիմում ենք նաև առողջապահական հիմնարկներին և նրանց աշխատակիցներին՝ մարդու առողջության մասին տեղեկություններ տրամադրելուց առաջ հաշվի առնել բժշկական գաղտնիքն ու մարդու անձնական տվյալները չհրապարակելու օրենսդրական պահանջները։

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ ՎԵՐՈԳՐՅԱԼԸ, առաջարկում ենք վերանայել արտակարգ դեպքերի մասին հանրությանն իրազեկելու քաղաքականությունը։ Անհրաժեշտության դեպքում մեր փորձագետները կարող են օժանդակել ձեզ՝ ավելի հավասարաչափ քաղաքականություն մշակելու հարցում։

Ընդունվել է 2021թ. սեպտեմբերի 6-ին,

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի հետևյալ կազմով՝

Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ, «Մեդիամաքս» լրատվական գործակալության գլխավոր խմբագիր

Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ, Վանաձորի «Լոռի» հեռուստաընկերության գործադիր տնօրեն

Ռուբեն ԲԱԲԱՅԱՆ, Երևանի Հովհաննես Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոնի տնօրեն

Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ, Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ

Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Գյումրիի «ԳԱԼԱ»

հեռուստաընկերության գործադիր տնօրեն

Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մամուլի փորձագետ

Արա ՂԱԶԱՐՅԱՆ, իրավաբան

Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ

Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, «Արմենիա» հեռուստաընկերության «Ժամը» լրատվական հաղորդման գլխավոր խմբագիր, «Newmag» ամսագրի գլխավոր խմբագիր

Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, Երևանի մամուլի ակումբի նախագահ

Արա ՇԻՐԻՆՅԱՆ, Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահ

Նունե ՍԱՐԳՍՅԱՆ, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն

Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ, Արմավիրի «Ալտ» հեռուստաընկերության խմբագիր

Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ, Media.am-ի պրոդյուսեր

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձևավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 69-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2015 թվականի մայիսի 16-ի ընդհանուր ժողովում: